



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1092

ԵՐԵՒԱԿԱՅ ՈՒԹԵԱՆ

Մ Ե Ղ Ք Ե Ր

ԼԵՐ. ՏՐ. ՀԱԼՁՆՏ

معارف عمومیہ نظارت جلیلہ سنک ۵ ربیع الآخر ۱۳۲۲  
و ۲۲ حزیران ۳۲۰ تاریخی و ۱۰۴ نومرولی  
رخصتنامه سیله طبع اولمشدر

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՄԱՏՔԻՈՍԵԱՆ

1904

2010

73525

21  
2-15

Երեւակայութեան կարողութիւնը  
մարդկային ամէնէն ազնիւ կարողու-  
թիւններէն մին է : Անոր միջոցով բա-  
րեպաշտ հոգիներ կը վերանան և Աս-  
տուծոյ հետ սերտ հաղորդութիւն  
կ'ունենան : Սակայն ամէնէն աղէկ  
բաները ամէնէն գէշ կերպով կրնան  
գործածուիլ , ինչպէս շատ ճարտար-  
օրէն կը ցուցուի Տր. Հալլնտի այս  
փոքրիկ տետրակով :



## ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԵԱՆ ՄԵՂՔԵՐ

«Ատանգաւոր է սրածայր գործիներու  
հետ խաղալ»

«Փորձութենէ խոյս տուողը մեղքէ  
խոյս կու տայ»

«Իուք մեղքի պատեհութիւններէ հե-  
ռացէք, Աստուած ալ ձեզ կը հե-  
ռացնէ մեղքերէ»

«Ստիտը որ շատ անգամ աղբիւրը  
կ'երթայ՝ կը կոտորի վերջապէս»

Առաքինութեան և մոլութեան մէջսեղ  
սահման մը կայ դիւթական, ուր շատ  
հոգիներ կ'ապրին ու կը սնանին գաղտ-  
նապէս և իրենց արտաքին կեանքի սեղ-  
մումներուն ու զրկումներուն վրէժը կը  
հանեն : Ես անգամ մը շուն մը ճանչցայ,  
որ իր կեանքի ամէնէն երջանիկ և հրճուա-  
լից ժամերը այդ դիւթական երկրին մէջ  
կ'անցընէր : Անբան բոլոր կենդանիները  
այն շէնքին ուր այս շունը կը գտնուէր՝

ինքն ու կատու մըն էին : Շունը ասե-  
լութիւն մը չունէր իր ընկերին դէմ : Ար-  
գարեւ այնչափ բարի էր որ ուեւէ բանի  
դէմ ասեղութիւն չունէր : Մէկ երկու ան-  
գամ կատուին նեղութիւն տալու յանցան-  
քի մէջ բռնուած էր , և ծծի խիստ պա-  
տիժ կրելով հասկցած էր թէ իրեն ներելի  
չէ այդ խաղը խաղալ : Սյուս ամենայնիւ  
չդադրեցաւ անոր վրայ մտածելէ : Ամէն  
պատեհ առիթով անոր ճամբուն վրայ կը  
անկուէր : Ուշի ուշով կը հսկէր անոր վրայ,  
մինչ որսի կ'սպասէր տեղ մը պահուրտած :  
Կը վախցնէր զայն մուռնչներով և այլեւ-  
այլ կեղծ յարձակումներով , և անու-  
ղողի ու սոսկումի մէջ կը պահէր շարու-  
նակ : Արդ , թէպէտ չեմ կարծեր թէ իր  
գիտաւորութիւնն էր ամենափոքր Ֆլաս մը  
հասցնել անոր , տարակոյս չունիմ որ իր  
կատաղի երեւակայութեամբ հազար ան-  
գամ սպաննած էր զայն , հալածած՝ թա-  
ղին ամբողջ շրջանակին մէջ և կտոր  
կտոր ըրած՝ անոր մարմինը : Համա-

նօտիւ , թէպէտ գիտէր թէ զայն նեղելու  
չէր , կ'զգար նեղելու փորձութեան հա-  
ճոյքը որ նեղելու հաճոյքէն քիչ պակաս  
է , և այդ փորձութեան յառաջ բերած  
զրգուման մէջ կը գտնէր իր անձնուրացու-  
թեան կամ զրկման բարձրագոյն փոխա-  
րինութիւնը կամ վարձքը :

Մարդկային ազգը այսպիսի շատ արա-  
ւածներ ունի իր մէջ , այրելու ու կրնելու՝  
որոնք արտաքուստ անթերի են վարքով ,  
մեղանչելու գիտաւորութիւն չունին , և  
եթէ ոչ իրենց խիղճը՝ զէթ իրենց դատու-  
թիւնը կը հպատակեցնեն անձնագուպու-  
թեան շարժառիթներուն , բայց գաղտնա-  
պէս կը դիմեն փորձութեան դաշտերը և  
անոր յառաջ բերած յուզումներուն մէջ կը  
փնտտեն գոնէ համը այն մեղքերուն , ո-  
րոնցմէ զգուշացած են : Փորձութեան այս  
գաւառը բազմաթիւ միտքերու համար ա-  
մէնէն հրապուրիչ երկիրներէն մին է : Հոն  
կը փութան անոնք արգելեալ բաներու  
գեղեցիկ բայց անմաքուր պատկերները

գիտել և վայելել : Արդարեւ երբեմն մտածած եմ թէ այրեր ու կիներ կան , որոնք իրօք աւելի սիրելի կը գտնեն փորձութիւնը քան մեղքը , և որոնք հարազատ փորձով սորված են թէ երեւակայութեան հաճոյքները աւելի անոյշ են քան զգայարաններու հաճոյքները : Իրողութիւնը այսպէս ըլլա՛յ թէ չըլլայ , տարակոյս չունիմ թէ փորձութեան սէրը իր յոռաջ բերած յուզումին պատճառով շատ ընդհանուր է նոյն իսկ անոնց մէջ , զորոնք առաքինութեան ախպարներ կը համարինք : Այս յուզումներուն անձնատուր ըլլալը հոգիին աւելի վնասակար է սա պատճառով որ անոնք , տեսակ մը հեշտամուլ իմաստակութեամբ , իրական մեղքի սահմանէն դուրս և անվնաս կը համարուին : Այս անձնատուութեան նպատակը մեղանչել չէ , այլ միայն ջանալ մեղքէն կորզել բոլոր այն հաճոյքը , զոր կարելի է վայելել առանց անոր պատիժը կրելու :

Մեղանչելու փորձութեան հետ խաղալն

անտարակոյս նուազ աղետալի է ըստ երեւութին քան իսկապէս մեղանչելը , և այդ համեմատութեամբ ալ փոքր մեղք է , բայց մեղք է և հիմնովին մեղք : Փորձութեան յուզումը սիրող և փնտոող մարդը կը ցուցնէ թէ ինք մեղքէ կ'զուշանայ վախէն և ոչ թէ սկզբունքով , թէ վարքով առաքինի ըլլալով հանդերձ՝ սրտով մութեան յարած է : Կեղծ կեանք է այս , և դժուր կեանք : Շատեր , շատեր կան որոնց փորձութիւն կու դայ մեղքի արգելեալ աշխարհէն : Սակայն կու գայ անկոչ և անհրաւէր , զեռամբողջովին չըստպուած կամ չնուաճուած հին ախորժակներու և հին կիրքերու ճամբով , և ետ կը մղուի , կը մերժուի ճիգով : Ինչ որ կ'ուզեմ նշաւակել և պախարակել՝ հոգիին կամաւոր այն ճիգն է , որով փորձութիւն կը փնտոէ իբրեւ չարգելուած բարիք մը : Երեւակայութեան կամաւոր և զաղանի մեղքը կը պախարակեմ ոչ միայն իրբեւ բան մը որ ինքնին մեղք է էականապէս ,

այլ իբրեւ ուղի մը՝ որով ամէն հոգի բնականապէս կ'երթայ յայտնի մեղք գործել վերջապէս : Երեւակայութեան մեղքը ոչ մէկուն կը մնասէ ու զլակի , բայց միայն մեղանչողին : Սակայն երբեք չեմ տեսած մարդ մը սրտով աւելի աղտոտ , աւելի ապականուած քան այն վատ կեղծաւորները , որոնք անգապար կը խորհին այնպիսի մեղքերու վրայ զորոնք չեն համարձակիր գործել :

Շատ անգամ կը զարմանանք թէ ի՞նչպէս Աստուած կարդ մը այրերու եւ կիներու թոյլ կու տայ մեզի սարսափ ազդող մեղքեր գործել : Կը զարմանանք թէ անոնք ի՞նչպէս , միայն մէկ ժամու փորձութեան տակ , առաքինութեան եւ պատուի բարձունքներէն վար կը գլորին մեղքի ու ամօթի տիղմին մէջ : Իրողութիւնը սա է որ այդպիսի անկումներ կամ գլորումներ չկան կամ գրեթէ չկան : Այն այրերը եւ կիները արդէն փորձութեան հետ կը խաղային , անոր ազդեցութեան են-

թարկուած , տկարացած ու վերջապէս ապականուած էին : Եթէ կարելի ըլլայ իմանալ գաղտնի պատմութիւններն այն մարդոց , որոնց մուկթիւնը յանկարծ ի յայտ կու գայ , պիտի տեսնենք որ անոնք ապականութեան այս նախապատրաստական բովէն անցած էին , թէ սովոր էին անձամբ փորձութիւն փնտռել որպէս զի անոր յուզումները վայելէին , թէ արտաքուստ անսպասու վարքի մը ներքեւ մեղք հիւրընկալած ու փայփայած էին իրենց երեւակայութիւններով մինչեւ որ իրենց բարոյականի ըմբռումը բթացաւ եւ իրենք պատրաստուեցան այն գործին , զոր ընել անկարող են կը կարծէին :

Խորապէս եւ երախտագիտութեամբ կը հաւատամ թէ փորձուողներու մտքին վրայ Աստուածային զսպողական ազդեցութիւն մը ի գործ կը զրուի : Բայց կը հաւատամ թէ կէտ մը կայ , ուրկէ անոյին քիչ անգամ կ'անցնի այդ ազդեցութիւնը : Չեմ հաւատար թէ Աստուած միջամտելով



մեղանչելէ կ'արգելէ այնպիսի մէկը , որ կա՛մ կը փնտռէ կա՛մ կամաւ կ'ողջունէ մեղանչելու փորձութիւնը կամ պատեհութիւնը : Երբ մէկը պատեհութեան մէջ հրապոյր և փորձութեան մէջ հրճուանք կը գտնէ , արդէն իսկ սրտով գործած կ'ըլլայ այն մեղքը , զոր արդեամբ գործելէ կը քաշուի : Աստուած քիչ անգամ կը միջամտէ՝ պահպանելու համար այդպիսի մէկը մեղքի մէջ աւելի յաւաջանալէ : Մեր պարտքն է հեռանալ մեղքի պատեհութիւններէն , Աստուած ալ մեզ կը հեռացնէ մեղքէն : Անհունապէս սուրբ էակէ մը ակնկալելու բոլոր բանն այս է որ ան մեզ պահպանէ մեր վրայ յարձակող փորձութեան զօրութենէն : Կարծրացած , անպատկառ կամ շատ տգէտ ու խարուած ըլլալու է մարդ մը , որ կրնայ աղօթք ընել ազատուելու համար յաղթահարիչ զօրութենէն այն փորձութեան , որու միջնորդութիւն մէջ կը մտնէ ինք ամենայն յօտարութեամբ : Արդարեւ մեզի պատուիր-

ուած է աղօթել , ոչ թէ որպէս զի ազատուինք փորձութեան զօրութենէն , այլ որպէս զի փորձութեան չտարուինք :

Կրնայ ըսուիլ թէ Քրիստոնէական կենցաղի արուեստին կէսը փորձութենէ խոյս տալէ կը բաղկանայ կեանքի միջինքին հասած մէկը ինքզինք քիչ դիտած և ուսումնասիրած է , եթէ չէ ստույգ իր նկարագրին տկար կէտերը և իր վրայ ամէնէն աւելի ուժգնութեամբ յարձակող փորձութեան տեսակները : Անտարակոյս մաքուր և բարի կեանք սիրող ամէն մարդ փորձութենէ խոյս կու տայ , ինչպէս խոյս պիտի տար մեղքէն՝ որու պիտի առաջնորդուէր անով : Քիչ կարեկցութիւն ունի՛մ այնպիսիներու համար , որոնք իրենց բարոյական յաճախողէպ անկումները փորձութեան սաստկութեան կը վերագրեն : Այո , քիչ կարեկցութիւն ունի՛մ , վասն զի փորձութիւն եւ պատեհութիւն , առանց փնտռուելու աւելի յաճախ չեն գար անոնց քան ուրիշներու : Մոլութիւն

սիրող և փորձութենէ ախորժող մարդն է որ անոնց զօրութեան կ'ենթարկի : Չեմ հաւատար թէ կ'զգաստանայ այն արբեցողը որ անհոգութեամբ կ'անյնի գինետան քովէն ուր կը յաճախէր երբեմն, և ներս կը նայի անզգուշութեամբ :


Պարտիւք խոյս տալ փորձութենէ, վասն զի մոլութիւնը այն ժամանակ միայն կ'ըլլայ սիրուն և հրապուրիչ, երբ երեւակայութեան զօրութեամբ կը փառաւորուի և կը գեղազարգուի : Ամէն մոլութիւն իր մերկութեան մէջ կը պարզէ տգեղութեան տեսարան մը միայն : Կամաւ փնտոռած փորձութիւններու յուզումներէն ախորժողներու մէջ հազարաւորներ կան, որոնք սարսափով և պժգանքով խոյս պիտի տային եթէ յանկարծ ներկայանային մոլութեան մը, որմէ հրապուրուած են հեռուէն : Անասնաբարոյութիւնը չունի երբեք գեղեցկութիւն, ի բաց առեալ ինչ որ գրգռուած երեւակայութիւն մը փոխկու տայ անոր : Ան իրեն յատուկ հրապոյ-

րով չէ որ իրեն կը քաշէ այրեր և կիներ : Այնքան ստորին և զզուելի է որքան օճը, որու չար աչքերուն շուրջ կը թռչտի խեղճ թռչունը մինչեւ որ զո՛հ ինչայ իրեն սպասող ժանիքին :

Այսչափն ըսի ընդհանրապէս երեւակայութեան մեղքերու վրայ, գիտնալով թէ գիտողութիւններս կը վերաբերին գըլխաւորապէս փորձութիւններու մէկ դասակարգին, որ ամէնէն վտանգաւորը եւ ամէնէն մոլորեցուցիչն է : Հրապոյր չունին բնաւ սպանութեան կամ մեծ վրիժառութեան մը խորհուրդները, գողութեան և ոճիրներու մեծամասնութիւնը : Երեւակայութիւնը չունի բնաւ այսօրինակ ոճիրներ արդարացնելու խարէական ձեռնարկութիւն, կամ զանոնք գեղեցկութեան միջնուորտով մը պատելու կարողութիւն : Երեւակայութեան մեղքերն են գլխաւորապէս փափաքներ՝ ապօրինաւորապէս վայելելու բնական կիրքեր և ախորժակներ, որոնց փորձութիւնը կու գայ օրինա-

ւոր և յերկնուստ հաստատուած հակումներու ճամբով : Օրինաւորին և ապօրինաւորին , արգելեալին և չարգելեալին հիւսքերուն մէջ բարոյական դատողութիւնը կը չփոթի և բարոյական մաքրութիւնը կը վտանգուի : Այրեր և կիներ չեն սարսափիր եւ վտանգի երկիւղ չեն զգար սա պատճառով որ իրենց բնութիւններուն ամէնէն անոյշ և ամէնէն զօրաւոր հակումներէն միով կամ միւսով կը տարուին փորձութեան դաշտը : Հոն անոնք աներկիւղ կը դեգերին սա պատճառով որ մեղանչելու դիտաւորութիւն չունին : Ո՛հ , եթէ յանկարծ վերնար վարապոյրը և իր խսկութեամբ ի տես դար մեղքի այս երեւակայական աշխարհը , ուր բիւրաւորներ առանց ուրիշներու գիտութեան և կասկածին՝ կ'երթան երազել հեշտութիւններ , որոնք չեն նուիրագործուած այն կարգի յարաբերութիւններով որոնցմով միայն ներելի է անոնց վայելումը , ո՛րքան ստօթալի պիտի երեւէր արդեօք :

Երեւակայութեամբ կառուցուած զգայական այս աշխարհը ո՛րքան գեղեցիկ է և նենգաւոր : Կեանքի ծովուն մէջ կիւսական կղզիի մը նման կը ժպտի արեւուն լոյսին և դալարեաց մէջ կը նիրհէ , աշխարհի ծանօթ ըլլալով ոչ թէ ընդհանուր և յայտնի կերպով , այլ անհատական և գաղտնի գիւտով : Ամէն ովկիանոսի ալիքներ կը համբուրեն անոր ափերը : Ամէն կլիմայի սիւքեր կը խաղան անոր ծառերուն մէջ և կը յոգնին հեշտալուր ու գրգռիչ նուազներէն զոր կը տանին իրենց թեւերով : Ծաղիկներ կը կքին անփութօրէն աղբիւրներու ջուրերէն , և գեղեցիկ էակներ իրենց ձերմակ թեւերը կը բանան և զրկախառնութեան կը հրաւիրեն : Գիշեր և ցերեկ միլիոնաւոր նաւեր , առանց նշմարուելու իրարմէ և իրենց ետեւ թողուած իրական կեանքի աշխարհէն , այս դիւթական կղզին կը փութան շուայտութեան և վարձատրութեան համար : Նաւորդները զիրար չեն տեսներ երբեք : Նոյն ճամբա-



1342 ԲԿ

ներէն կ'անցնին կը դառնան առանց իրա-  
րու գիտութեան, և ոչ ոք գիտէ և ոչ ոք  
կը հարցնէ թէ ո՛ր էին կամ ուրկէ եկան:  
Կրկին ու կրկին կը կատարեն իրենց այդ  
այցելութիւնը առանց բացարձակապէս մո-  
լեկան դիտաւորութեան, միանգամայն  
առանց մոլութենէ չվարակուելու: Եթէ  
Աստուծոյ լոյսը ծագէր այս բանուկ ծովուն  
վրայ և երեւան հանէր այս կզզիին գաղտ-  
նիքները, ո՛հ, ի՛նչ ամօթալի բաներու ակա-  
նատես պիտի ըլլայինք, ի՛նչ հայրերու,  
մայրերու, օրիորդներու, պարոններու և  
նոյն իսկ տղայոց, ձիւնի պէս մաքուր  
համարուած, որոնք յանցաւորի աչքե-  
րով և սարսափէ դալկացած շրթունքներով  
կը փախչին անտանելի խայտառակութեան  
մը մէջ չբռնուելու համար:

Արդէն իրական կեանքի աշխարհին մէջ  
բաւական մոլութիւն կայ և հոն է որ  
զայն կը նշմարենք: Սակայն երեւակա-  
յութեան այն միւս աշխարհին մէջ զոր  
չենք տեսներ՝ աւելի կայ թունաւորիչ մո-

լութիւն, սպանիչ մոլութիւն. մոլութիւն՝  
որ բուած գերեզմաններու կը փոխարկէ  
տաճարները, որոնք մաքուր և սուրբ կը  
համարուին իրենց մէջ գտնուող ըւրաւոր  
մարդոցմէ: Երեւակայութեան այդ աշ-  
խարհին մէջ սիրով և յօժարութեամբ  
յուզումներ փնտռողներէն թող ոչ մին  
անմեղ կամ մաքուր համարի ինքզինք:  
Մարկարէթ Ֆուլըրի այն նշանաւոր բա-  
նաստեղծութիւնը, որ անջնջելի արատ մը  
կը դնէ այն օրիորդին վրայ որ իր խօսե-  
ցեալին վրայ անպարկեշտ երազ կը տեսնէ,  
անաւոր և միանգամայն լիովին օրինաւոր  
նշանակութիւն մը ունի: Երեւակայու-  
թեան և երազի այդ աշխարհը արգելեալ  
երկիր մ'է, ուր մաքուր ոտքեր չեն թա-  
փառիր երեք և որմէ յաւիտեան խորչե-  
լու են ամէն անոնք որոնք մաքուր մնալ  
կ'ուզեն: Դիւերու և դատապարտեալ ողի-  
ներու աշխարհ է այն: Անոր ապականեալ  
օդը կը թունաւորէ արական սեռը և կը  
թառամեցնէ իգական սեռը:

« Սափորը որ շատ անգամ ազբիւրը կ'երթայ՝ կը կոտորի վերջապէս : » Կարծեմ թէ զեղծ մարդոց կամ կործանած կիներու հարիւրին մէջ չկայ մէկը, որու կորստեան ճամբան շանցնիր ուղղակի երեւակայութեան այս արգելեալ դաշտէն : Այդ դաշտը գացին անոնք և յաճախեցին մինչեւ որ թունալից մթնոլորտէն տկարանալով, իրենց մեղսասիրութեամբ ատաւորուելով, իրենց հեշտասիրական հակումներուն մէջ յառաջանալով և մեղքի խորհուրդներուն ընտելանալով ինկան՝ այլեւս կանգնելու ոչ տրամադրութեամբ և ոչ կարողութեամբ : Այդ դաշտին մէջ կը շահի Սատանան բոլոր իր յաղթութիւնները : Հոգ կը փոխակերպուի լուսոյ հրեշտակի : Հոգեկան կորստեան խնդիրը կը լուծուի մոլութեան և առաքինութեան մէջտեղի այդ խնդրական գետնին վրայ, ուր տխմար բազմութիւններ կը գիմեն՝ այն բաները երազել զորոնք չեն վայելեր : Առաքինութեան գետնին վրայ հաս-

տատ կանգնող մաքուր անձը, կամ մոլութեան դէմ յանդիման գտնուող մաքուր հոգին, տասը հազարին մէկ չչեղիր իր ուղղութենէն : Ան իր կործանումը պատրաստող զօրութեան տակ այն ատեն միայն կ'ընկճուի, երբ յօժարակամ կը դեգերի փորձութեան նենգաւոր ծուղակներուն մէջ և կը սիրէ պատկերները զորոնք հոն կը գտնէ :

Անհրաժեշտ է այս խնդիրը բացատրել մասնաւորապէս դեռատիներուն, որոնց երեւակայութիւնները ժիր են եւ կիրքերն ուժգին, եւ որոնց անփորձութիւնը հետեւանքներու անտեղեակ կը թողու զիրենք : Չկայ վտանգի ուրիշ դաշտ մը, որու վրայ աւելի քիչ կը խօսուի քան ասոր վրայ : Ես, որ Քրիստոնեայ երկիրներու և եկեղեցիներու հրապարակային պաշտամունքներուն կանոնաւորապէս ներկայ եղած եմ տարիներով, միայն երկու անգամ լսած եմ այս նիւթին վրայ խօսուած ազդեցիկ ու անաչառ քարոզ :

Գիրքերն առ հասարակ լուս են ասոր վրայ : Հայրեր ու մայրեր , որոնք ամէն ուրիշ բանի մէջ հաւատարիմ են , կը խորշին այս բաներուն վրայ իրենց հոգեհատորներուն խրատ տալէ , սիրելով միշտ հաւատալ թէ ասոնք բոլորովին անձանօթ են անոնց : Այսպէս է դպրոցներու մէջ , այսպէս է ամէն տեղ , ուր խրատի պէտք և պահանջ կայ : Պիղծ խօսք մը , երկրայելի կատակ մը , մեղքի պատմութիւն մը որ ուշի ուշով կ'ունկնդրուի այս մատաղ հոգիներէն՝ կը գրգռէ անոնց երեւակայութիւնը , և իսկոյն կը գտնեն անոնք այս բազմավտանգ և մահաոթ մտածութեան դաշտը և կը սորվին անոր բոլոր ճամբաները առանց դեռ գաղափար ունենալու այն վտանգներուն վրայ՝ որոնց կ'երթարկուին իրենք : Կ'ուզեմ այդպիսիներուն ըսել , ինչ որ քիչ անգամ կը լսեն ուրիշ շրթունքներէ և գրիչներէ , թէ ո՛ր ատեն որ այդ դաշտին հրապոյրը զգան , երբեք չեն կարող հոն մնալ կամ հոն մուտ

գտնել առանց պղծութեան կամ առանց մեղքի : Շուտ թէ ուշ իրենց կեանքին մէջ պիտի իմանան թէ փորձութիւններու հետ յօժարութեամբ խաղալու և առանց արգելքի անպատշաճ և պիղծ երեւակայութիւններ տածելու պատճառով իրենց նկարագիրը այնպիսի միաս մը կրած է , զոր անհամար դարեր պիտի չկրնան դարմանել :

—

« Երանի անոնց՝ որ սրտով մաքուր են , ինչու որ անոնք պիտի տեսնեն զԱստուած » (Մատ. Ե. 8) :

« Ով Աստուած , իմ մէջս մաքուր սիրտ ստեղծէ և իմ ներսի դիւ ուղիղ հոգի նորոգէ » (Սաղ. ԾԱ. 10) :

1549



«« Ազգային գրադարան



NL0028169



